ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 2

Հայտերի գնահատման նիստի

Սպանդարյան և Շամբ ՀԷԿ-երի համար կրնկակալի հովացուցիչների մատակարարման ձեռքբերման համար ստացված տեխնիկական հայտերի գնահատման նիստի

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 16/25**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում 6-րդ հավելվածում

2026թ. փետրվարի 27-ին, Ժամը՝ 15:45-ին Ք. Գորիս, ՀՀ

Մասնակցում էին՝	
Հանձնաժողովի նախագահ՝	Արամ Մելքումյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գավրուշա Աթայան Արտաշես Գրիգորյան Կամո Աղավելյան Սահակ Մկրտչյան Արթուր Մովսիսյան Արմինե Մանուկյան Անուշ Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան

1. Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով ներկայացված տեխնիկական առաջարկներին և համաձայն մրցութային փաթեթի 6.3 կետի պահանջների առաջարկել էր մինչև 2025թ նոյեմբերի 30-ը պահանջել մասնակիցներից պարզաբանել հայտում ներկայացված տեղեկատվությունը և ստացված պարզաբանումների արդյունքում հանձնաժողովը հայտերը վերջնական գնահատել է հետևյալ կերպ: Գնահատման արդյունքում արձանագրվեցին ստորև ներկայացված արդյունքները:

2. «Էներջի Փաուեր Ֆլոու» ՍՊԸ-ի հայտը չի բավարարում որակավորման պահանջներին և չափանիշներին: Մասնավորապես՝ վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 5,000,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ, էներգետիկայի ոլորտում կրնկակալի կամ համադրելի պտտվող մեքենաների (տուրբիներ, կոմպրեսոր, գեներատոր) հովացման համակարգերի արտադրության կամ մատակարարման վերաբերյալ առնվազն մեկ պայմանագրի իրականացված փորձը բացակայում է: Ուստի «Էներջի Փաուեր Ֆլոու» ՍՊԸ-ի հայտը մերժվում է և ֆինանսական առաջարկների բացման ժամանակ հաշվի չի առնվելու: Global Energy Group LLC-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձի վերաբերյալ տեղեկատվության համաձայն իրականացված 1,055,130 ԱՄՆ դոլարի արժողությամբ պայմանագրի ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ տվյալ փորձը վերաբերվում է տուրբինային միավորների վնասման դեպքում տուրբինային սրահը հեղեղումից պաշտպանելու վերանորոգման բաղադրիչների մատակարարման հետ: Ուստի Global Energy Group LLC-ի հայտը մերժվում է և ֆինանսական առաջարկների բացման ժամանակ հաշվի չի առնվելու:
3. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Voith Hydro GmbH & Co KG-ի և «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի հայտերը բավարարում են որակավորման չափանիշներին և տեխնիկական պահանջներին: Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը առաջարկեց ծանուցել այն հայտատուներին ում առաջարկները չեն համապատասխանել մրցույթի տեխնիկական պահանջներին և որակազրկվել են, և որ ֆինանսական առաջարկների բացման ժամանակ իրենց հայտերը հաշվի չեն առնվելու և երկրորդ փուլով բացել ֆինանսական առաջարկները ողջամիտ ժամկետում՝ համաձայնեցնելով մասնակիցների հետ:
4. Ֆինանսական հայտերը բացվեցին 2025թ. դեկտեմբերի 3-ին ժամը 17:05, և ZOOM հեռահար զանգի ընթացքում բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները միացել էին առցանց բացման նիստին: Coupa համակարգում առցանց բացվեցին հայտատուների կողմից ներկայացված առաջարկները, և արձանագրվեց հետևյալ արդյունքները՝

N	Մասնակից	Առաջարկված գինը	ՀՀ դրամ համարժեք
1	Voith Hydro GmbH & Co KG	225,700 ԱՄՆ դոլար	90,280,000 ՀՀ դրամ
2	«Ի Սի Էներջի» ՍՊԸ	268,400,000 ՀՀ դրամ	268,400,000 ՀՀ դրամ

5. Գնային առաջարկների ստուգման արդյունքում թվաբանական սխալներ չեն արձանագրվել: Սակայն նշվեց, որ Voith Hydro GmbH & Co KG գինը ներկայացրել էր FCA մատակարարման պայմաններում, մինչդեռ մրցութային փաթեթի պայմանների համաձայն պետք է լիներ DAP կամ CIP պայման: Ուստի առաջարկվեց դիմել Voith Hydro GmbH & Co KG համապատասխանեցնել գնային առաջարկը ըստ պահանջի: 2025թ.-ի դեկտեմբերի 18-ին Voith Hydro GmbH & Co KG ներկայացրեց ճշգրտված/վերանայված գնային առաջարկը մատակարարման CIP պայմանով, որը կազմում էր 265,880 ԱՄՆ դոլար, կամ 106,352,000 ՀՀ դրամին համարժեք, ինչը գերազանցում է նախահաշվային գինը 47,752,000 ՀՀ դրամի չափով (նախահաշվային գինը 58,600,000 ՀՀ դրամ):

6. Հանձնաժողովը արձանագրեց, որ արդյունավետ աճուրդի կազմակերպումը հնարավոր չէ՝ հաշվի առնելով ներկայացված գնային առաջարկների միջև առկա էական տարբերությունը:
Հաշվի առնելով, որ նվազագույն գնային առաջարկը, ներկայացված Voith Hydro GmbH & Co KG ընկերության կողմից, գերազանցում է հաստատված նախահաշվային արժեքը 47,752,000 ՀՀ դրամով, ինչպես նաև գերազանցում է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում հաստատված արժեքը, և տվյալ գնման գործընթացի ֆինանսավորման համար նախատեսված համապատասխան բյուջետային հատկացումներ առկա չեն, գնահատող հանձնաժողովը որոշում է՝
   - Սույն գնման ընթացակարգը ճանաչել չկայացած (չեղարկել),
   - Նշված գնումը ներառել 2028 թվականի նախատեսվող գնումների ցանկում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:

Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան	
	Գավրուշա Աթայան	
	Կամո Աղավելյան	
	Սահակ Մկրտչյան	
	Արտաշես Գրիգորյան	
	Արթուր Մովսիսյան	
	Արմինե Մանուկյան	
	Անուշ Հարությունյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Արման Պետրոսյան	